ՀՀ Կենտրոնական բանկի էլեկտրոնային վճարումների համակարգ (ԷՎՀ)

Էլեկտրոնային վճարումների համակարգը հանդիսանում է միջբանկային վճարային կարևորագույն համակարգերից մեկը, որի ներդրումը ՀՀ տարածքում գործող բանկերում և նրանց մասնաճյուղերում սկսվել է 1997թ.-ից: ԷՎՀ-ի սեփականատեր և օպերատոր հանդիսանում է ՀՀ կենտրոնական բանկը, որը միևնույն ժամանակ վերահսկում և կարգավորում է համակարգի գործունեությունը, մշակում է համակարգի զարգացման քաղաքականությունը և ապահովում է դրա իրականացումը: Էլեկտրոնային վճարումների համակարգն աշխատում է ռեալ ժամանակում համախառն հաշվարկների (RTGS) իրականացման ռեժիմով, ինչը նշանակում է, որ համակարգ մուտքագրված վճարային կարգադրությունների մշակումը և վերջնահաշվարկը կատարվում է առանձին՝ ըստ յուրաքանչյուր վճարային կարգադրության: Համակարգում վճարային հաղորդագրությունների հոսքերի կառուցվածքը V տիպի է:

ԷՎՀ-ով իրականացվում են միայն կրեդիտային փոխանցումներ, այդ թվում՝ առևտրային բանկերի սեփական փոխանցումները տարբեր ֆինանսական պարտավորությունների գծով, բյուջեին ուղղված վճարումները, տնտեսվարող սուբյեկտների՝ միմյանց ուղղված վճարումները, քաղաքացիների մասնավոր տրանֆերտները և այլն:

ԷՎՀ-ում նախատեսված չեն վճարային հաղորդագրությունների հետ կանչի կամ փոփոխման հնարավորություններ (irrevocable payment orders): Համակարգը չունի փոխանցումների իրականացման գումարային սահմանափակումներ. համակարգով կարող են իրականացվել ինչպես մեծածավալ, այնպես էլ մանրածախ վճարումներ: Համակարգում վճարային կարգադրությունները և այլ հաղորդագրությունները (հաշվի քաղվածք, վճարման մերժում և այլն) ներկայացվում են ՀՀ ԿԲ-ի կողմից մշակված հատուկ ֆորմատներով: Համակարգով կարող են իրականացվել ինչպես հատային փոխանցումներ, այնպես էլ փաթեթով փոխանցումներ, ինչպես նաև կարող են իրականացվել արտարժութային փոխանցումներ:

ԷՎՀ -ը գործում է հետևյալ սկզբունքների համաձայն՝

- հաշվարկները կատարվում են համախառն եղանակով՝ ըստ յուրաքանչյուր վճարային կարգադրության առանձին, հաշվարկների համար նախատեսված գործառնական ժամերի ընթացքում,
- ԷՎՀ մուտքագրված կարգադրությունները կատարվում են ըստ դրանց մուտքագրման հերթականության (կարգադրությունների կատարման «ՖԻՖՕ» սկզբունք),
- Էլեկտրոնային վճարումների համակարգով ներկայացվում են միայն այդ օրը կատարման ենթակա վճարումները. եթե վճարման կարգադրությունը ներկայացվել է վճարային հաղորդագրությունների ընդունման համար սահմանված գործառնական ժամերից դուրս, ապա այն ներկայացվում է վերջնահաշվարկի հաջորդ գործառնական օրը բացելուց հետո:
- վերջնահաշվարկները իրականացվում են Կենտրոնական բանկում վարվող մասնակիցների թղթակցային (հաշվարկային) հաշիվների միջոցով՝ հաշիվների մնացորդների սահմաններում: Համակարգի կողմից կատարված հաշվարկները վերջնական են և անվերադարձելի ՀՀ ԿԲ հաշիվներով կատարելու պահից:

- ԷՎՀ-ում նախատեսված չեն վճարային կարգադրությունների հերթերի վարման և կառավարման մեխանիզմներ. կարգադրությունը կատարելու համար համապատասխան հաշվում բավարար գումարի բացակայության դեպքում կարգադրությունը առանց կատարման մերժվում է, և մերժված կարգադրությունը կատարելու համար նախաձեռնողի կողմից այն նորից պետք է մուտքագրվի ԷՎՀ որպես նոր կարգադրություն,
- Վճարող-մասնակցի կողմից ՀՀ ԿԲ ուղարկված վճարային կարգադրությունը, համապատասխան ստուգումներից հետո, ավտոմատ կերպով փոխանցվում է «Գործառնական օր» համակարգ, որում, համապատասխան ստուգումներից հետո, կատարվում է վերջնահաշվարկը՝ դեբետագրելով վճարող մասնակցի և կրեդիտագրելով ստացող մասնակցի դրամական հաշիվը, որից հետո հաշվարկների կատարումը հավաստող հաղորդագրությունը փոխանցվում է ստացող կողմին: Միջոցները ստացող մասնակցի հաշվին կրեդիտագրվելուց հետո հաշվարկը համարվում է վերջնական և անվերադարձելի, և այդ միջոցները կարող են օգտագործվել ստացող մասնակցի կողմից: